ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22 mrgashen.kotayq@mta.gov.am

թիվ 314
02 նոյեմբերի 2017թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ.ԳՈՒԼՈՅԱՆ

Հարգելի պարոն Կ. Գուլոյան

Ի պատասխան Ձեր 2017 թվականի ապրիլի 14-ի թիվ 01/ 15.1/1607-17 գրության Ձեզ ենք ուղարկում Մրգաշեն համայնքի ղեկավարի որոշումները:

Առդիր 1 թերթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՐԱՄՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23 » հոկտեմբերի 2017 թվականի N 105

### ԱԼԲԵՐՏ ՎԱՀԱՆԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին » 2002թ. դեկտեմբերի 26-ի ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի, ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով և նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ալբերտ Վահանի Պողոսյանի ընտանիքին հատկացված է եղել 0.24հա տնամերձ հողամաս 0052-0028 ծածկագրով 0.08հա և 0002-0029 ծածկագրով 0.16հա բնակելի տնով :1999թ. քարտեզագրման ժամանակ 0002-0029 ծածկագրով հողամասը թյուրիմացաբար գրանցվել է 0,14հա մակերեսով, որը և գրվել է N 2173907 սեփականության վկայականում,սակայն նշված հողամասը իր կողային չափերի մեջ կազմում է 0.1577հա ուստի նրա կողմից օգտագործվող 0.0177հա հողամասը չի գերազանցում նրան հատկացված հողամասի 20%-ը և չի գտնվում 60 հոդվածով սահմանված հողերի ցանկում չի առաջացնում սերվիտուտ *որոշում եմ* .

1. Ճանաչել Ալբերտ Վահանի Պողոսյանի սեփականության իրավունքը ըստ քարտեզում և հատակագծում նշված կողային չափերի արդյունքների, 0002-0029 ծածկագրով փաստացի օգտագործվող 0.0177հա մակերեսով հողամասի նկատմամբ:

2.Կատարել համապատասխան ուղղում ըստ գեոդեզիստ քարտեզագրողի կողմից ներկայացված հատակագծի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԱՐԱՄՅԱՆ

2017թ. հոկտեմբերի 23
գ.Մրգաշեն